

Հայազգի պատանի ջութակահարուհին՝ Յեհուդի Մենուհինի անվան երիտասարդ ջութակահարների միջազգային մրցույթի մասնակից

Այս տարի հեղինակավոր Յեհուդի Մենուհինի անվան երիտասարդ ջութակահարների միջազգային մրցույթին (Menuhin Competition Geneva 2018) Հայաստանը կներկայացնի 17-ամյա պատանի ջութակահարուհի Դիանա Ադամյանը:

2018թ. փետրվարի 16-ին [Դիանա Ադամյանը հանդես կգա](#) Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ և մատուցի Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ կկատարի Բրուկի Ջութակի կոնցերտը, իսկ ս.թ. մարտի 1-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը Դիանան հանդես կգա մենահամերգով: Կարող եք հետևել Դիանա Ադամյանի հաջողություններին նաև Հանրային Հեռուստաընկերության եթերով:

Յեհուդի Մենուհինի անվան երիտասարդ ջութակահարների միջազգային մրցույթը հիմնադրվել է 1983թ-ին՝ աշխարհահռչակ ջութակահար Յեհուդի Մենուհինի կողմից և համարվում է ամենահեղինակավոր մրցույթը պատանի և երիտասարդ ջութակահարների շրջանում: Յեհուդի Մենուհինի անվան մրցույթն անվանում են նաև «ջութակահարների օլիմպիադա»: Մրցույթի շատ դափնեկիրներ համաշխարհային մեծ ճանաչում են վայելում՝ Ջուլիա Ֆիշերը, Իլյա Գրինգոլտսը, Դայշին Կաշիմոտոն, Լարա Ջոնը և շատ այլ անվանի ջութակահարներ:

Յեհուդի Մենուհինի անվան մրցույթին մասնակցում են մինչև 22 տարեկան ջութակահարներ: Մեր հայրենակցուհի Դիանա Ադամյանը ներառվել է ամբողջ աշխարհից ընտրված 22 երիտասարդ մասնակիցների ցանկում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Ճապոնիա, Թայվան, Դանիա, Հարավային Կորեա, Սլովենիա, Չինաստան, Շվեյցարիա, Ավստրիա և իհարկե՝ Հայաստան: Ժյուրիի ինն անդամների կազմում են մեծահամբավ ջութակահարներ՝ Պամելա Ֆրանկը (ժյուրիի նախագահ, ԱՄՆ), Իլյա Գրինգոլտսը, Յոջի Հատորին, Մաքսիմ Վենգերովը, Սոյունգ Յունը և այլք:

Ջութակահարուհի Դիանա Ադամյանը ծնվել է 2000թ-ին, երաժիշտների ընտանիքում: Ուսումը սկսել է Չայկովսկու անվան մասնագիտական երաժշտական դպրոցում՝ պրոֆեսոր Պետրոս Հայկազյանի դասարանում: Ներկայումս սովորում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյանի դասարանում: Դ. Ադամյանը բազում հանրապետական ու միջազգային մրցույթների դափնեկիր է, այդ թվում՝

- Առաջին մրցանակ «Վերածնունդ» մրցույթ-փառատոն (Գյումրի, Հայաստան, 2010թ.),
- Երկրորդ մրցանակ «Շչեկունչիկ» միջազգային հեռուստատեսային մրցույթ (Մոսկվա, ՌԴ, 2012թ.)
- Առաջին մրցանակ Հ. Բոգդանյանի 100-ամյակին նվիրված միջազգային մրցույթ-փառատոն (Երևան, Հայաստան, 2014թ.)
- Երկրորդ մրցանակ և Արծաթե մեդալ Չայկովսկու երիտասարդ երաժիշտների միջազգային մրցույթում (Նովոսիբիրսկ, ՌԴ, 2015թ.)

Դիանան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի անդամ է: Նրա ուսումնական և երաժշտական գործունեությանը աջակցում է ԵրազԱրտ ընկերությունը, ՀԲԸՄ-ն և DakApp հիմնադրամը: